

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. ԿԵՆՍԱԲԱՆԱՔԻՄԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. 2018թ. պլանավորած աշխատանքներ.

ՆՊԱՏԱԿ 1.ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ		
1.1.	Համալսարանական ՀԿԾ-ների վերամշակում:	Վերամշակվել են ֆակուլտետի բակալավրի և մագիստրատուրայի մասնագիտությունների կրթական ծրագրերը:
1.2.	Մասնագիտությունների տեղեկագրքերի վերանայում, թարմացում:	Մասնագիտությունների վերանայված տեղեկագրքերի առկայություն, քննարկված թողարկող ամբիոնների և հաստատված ֆակուլտետի խորհրդի կողմից
1.3.	Մասնագիտության կրթական ծրագրի, ֆակուլտետի մասնագիտությունների ուսումնական պլանների վերանայում գործնական/լաբորատոր բաղադրիչի ավելացմամբ	Կրթական ծրագրերի ուսումնական պլաններում լաբորատոր-գործնական և դասախոսության ժամերը գրեթե հավասարեցված են
1.4.	Մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացում. առարկայական ծրագրերի և դրանց կրթական ելքային արդյունքների վերանայում՝ մասնագիտության կրթական ծրագրին համապատասխան	Առարկայական ծրագրերի վերանայում, նոր ներդրված առարկաների առարկայական ծրագրերի և ԱՈԻՄՓ-ի կազմում, հաստատում ամբիոնների նիստերում
1.5.	Դասախոսական տեքստերի վերանայում, թարմացում, քննարկում ամբիոններում և ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդում	Վերանայված դասախոսական տեքստերի առկայություն, ամբիոնների նիստերի և ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի նիստերում քննարկումների արձանագրությունների առկայություն
1.6.	Ուսանողների անհատական-ինքնուրույն աշխատանքների կազմակերպման և անցկացման արդյունավետության բարձրացում	Ինքնուրույն-անհատական աշխատանքների թեմաների նորացում, փոխում: Ըստ առանձին դասընթացների ինքնուրույն աշխատանքների վերանայված թեմաների առկայություն ամբիոններում: Ինքնուրույն աշխատանքի տարբեր ձևերի կիրառում: Ուսանողների ինքնուրույն աշխատանքների դերի առավել կարևորում:
1.7.	Ուսումնական գործընթացի պահանջներին և խնդիրներին համապատասխան ուսուցման միջոցների, մեթոդների և տեխնոլոգիաների մշակում և ներդրում:	Նորագույն տեխնոլոգիաներով հագեցած լսարանների ստեղծում և կատարելագործում:

ՆՊԱՏԱԿ 2. Գիտահետազոտական գործունեություն		
2.1.	Մասնագիտական արդիական թեմաներով ներֆակուլտետային, միջֆակուլտետային հանդիպում-քննարկումների կազմակերպում/ գիտագործնական սեմինարներ, գիտական զեկուցումներ և այլն/	Ֆակուլտետի ամբիոնների կողմից տպագրված 29 գիտական աշխատանքների, 2 մենագրության, 1 դասագիրքի և 1 ուսումնամեթոդական ձեռնարկի առկայություն:
2.2.	միջազգային գիտական համագործակցության ծրագրերին/ հետազոտական դրամաշնորհներ, դրամաշնորհային ծրագրեր, միջբուհական և միջազգային գիտաժողովներ/ մասնակցություն	Միջազգային գիտական ամսագրերում տպագրված 6 աշխատանքների առկայություն:
2.3.	Ամբիոնների գիտական ուղղվածության որոշում, գիտական թեմաների ընտրություն և այդ ուղղությամբ բավարար հետազոտական աշխատանքների որակի ապահովում:	Ամբիոնների գիտահետազոտական ուղղվածությանը համապատասխան բակալավրիատի և մագիստրոսական թեզերի թեմաների քննարկում հաստատում: Կատարված հետազոտությունների արդյունքների հիման վրա գիտական աշխատանքների տպագրում: Մագիստրանտների հետազոտությունների արդյունքների հիման վրա հոդվածների կազմում, նախապատրաստում տպագրության:
2.4.	Ամբիոնների համալրում երիտասարդ և խոստումնալից կադրերով. հերթափոխի շարունակականության ապահովում:	Երիտասարդ կադրերով ամբիոնների համալրում, ինքնավերարտադրության դերի արժևորում:

ՆՊԱՏԱԿ 3. Սոցիալ-դաստիարակչական		
3.1.	.Ուսանողների հասարակական-քաղաքական ակտիվության, քաղաքական և իրավական մշակույթի, քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացների ապահովում:	Տարեվերջին ֆակուլտետի <Բաց դռների շաբաթ> բազմաբնույթ միջոցառումների կազմակերպում
3.2.	Ուսանողների դաստիարակություն հայրենասիրության, աշխատասիրության, մարդասիրության, քաղաքացիության և ինտերնացիոնալիզմի և հանդուրժողականության ոգով:	Հայրենասիրական դաստիարակության նպատակով միջոցառումների կազմակերպում, հանդիպում արցախյան հերոսամարտի և քառօրյա պատերազմի մերօրյա հերոսների հետ:
3.3.	Ուսանողների ֆիզիկական, ռազմահայրենասիրական, հոգևոր մշակույթային, գեղագիտական, առողջապահական դաստիարակության գործունեության ապահովում:	Ակտիվ մասնակցություն ֆակուլտետային, ներբուհական և հանրապետական միջբուհական միջոցառումներին

ՆՊԱՏԱԿ 4. Որակի ապահովում		
4.1.	Ժամանակակից մասնագիտացված գիտաուսումնական լաբորատորիաների ստեղծում	Կենսաբանության նոր՝ լաբորատոր սարքավորումներով, նոր տեխնիկական սարքերով հարստացած գիտաուսումնական լաբորատորիայի ստեղծում, գործարկում,
4.2.	Ժամանակակից ուսումնական, գիտական և ծրագրային ապահովման նյութերի ձեռքբերում	Դասախոսական տեքստերի թարմացում, լաբորատոր-գործնական աշխատանքների մեթոդական հանձնարարականների կազմում ամբիոններում
4.3.	Ուսումնական պրոցեսում ժամանակակից կրթական տեխնոլոգիաների ակտիվ ներդրում: Դասավանդման ժամանակակից տեղեկատվական և կոմունիկացիոն տեխնոլոգիաների զարգացում	Ամբիոնների դասախոսների կողմից մեթոդական սեմինարների մասնակցություն, դասավանդման նոր տեխնոլոգիաներին տիրապետելու ունակության բարձրացում
4.4.	Ակտիվ և ինտերակտիվ ուսուցման ձևերի օգտագործում	Դասավանդման գործընթացի կազմակերպում ուսուցման նոր տեխնոլոգիաներով
4.5.	Գործնական հմտությունների զարգացման նպատակով ուսանողների՝ փոքր խմբերով ուսուցման գործնական ծրագրի մշակում և իրականացում, լաբորատոր աշխատանքների կատարում:	Լաբորատոր-գործնական աշխատանքները թիմերով անցկացման մշակույթի ներդրում դասավանդման ընթացքում
4.6.	Կորպորատիվ կազմակերպությունների հետ համագործակցության պայմանագրերի կնքում՝ կադրերի վերապատրաստման և աշխատանքի հնարավորությունների ստեղծման հարցով:	Կնքված պայմանագրերի առկայություն գործատուների հետ, ֆակուլտետի դասախոսների մասնակցություն հանրապետական սեմինար-քննարկումներին
4.7.	Ուսումնական պրոցեսում հեռահար ուսուցման մշակում և ներդրում:	Հեռահար մեկ դասընթացի կազմակերպում
4.8.	Օտար լեզուների ուսուցման խորացում, լեզվական խոչընդոտի վերացում:	Լեզուների կենտրոնի հետ համագործակցության ակտիվացում, ուսանողների ընդգրկվածության բարձրացում

ՆՊԱՏԱԿ 5. Արտաքին կապեր և միջազգայնացում		
5.1.	Միջազգային գիտական համագործակցության ծրագրերին/ հետազոտական դրամաշնորհներ, դրամաշնորհային ծրագրեր, միջբուհական և միջազգային գիտաժողովներ/ մասնակցություն: Աշխատակիցների և ուսանողների մասնակցություն Շարժունության ծրագրերին:	Հետազոտական միջազգային դրամաշնորհային ծրագրերի մշակում: Ակտիվացնել շարժունության ծրագրերին ամբիոնների դասախոսների, աշխատակիցների, ուսանողների մասնակցությունը:
5.2.	Հանրապետական բուհերի հետ համատեղ դրամաշնորհային ծրագրերի կատարում:	Համագործակցություն ԵՊՀ և ՀՊՄՀ-ի կենսաբանության ֆակուլտետների հետ,
5.3.	Միջբուհական, հանրապետական ուսանողական ընթերցումներին մասնակցության ապահովում:	Մասնակցություն միջբուհական, հանրապետական ընթերցումներին

ՆՊԱՏԱԿ 6. Կառավարման համակարգի կատարելագործում		
6.1.	Մասնակցություն ՎՊՀ կառավարման համակարգի (Խորհուրդ, գիտխորհուրդ, ռեկտորատ, ֆակուլտետի գիտամեթոդական խորհուրդ, ՈԻԽ) աշխատանքներին:	Ֆակուլտետի ներկայացուցիչները (կ.գ.դ., պրոֆեսոր Զ.Ս.Վարդանյան, գ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱ թղթակից անդամ Ռ.Հ.Եղոյան, ք.գ.դ., պրոֆեսոր Հ.Ա.Ղազարյան, ք.գ.թ., դոցենտ Ա.Հ.Ղազարյան, դոցենտ Զ.Խ.Էվոյան, ուսանողներ՝ Ք.Կիրակոսյան, Ն.Մելիքյան, Ս.Մարկոսյան, Ա.Հովսեփյան) մասնակցում են ՎՊՀ կառավարման համակարգի (Խորհուրդ, գիտխորհուրդ, ռեկտորատ, ֆակուլտետի գիտամեթոդական խորհուրդ, ՈԻԽ) աշխատանքներին: Ուսանողներն ընդգրկված են Կրթական ծրագրերի կազմման աշխատանքային խմբի կազմում, ֆակուլտետի Որակի հանձնաժողովի կազմում:

ՆՊԱՏԱԿ 7. Կարիերայի և շրջանավարտների աջակցություն		
7.1.	Ֆակուլտետի շրջանավարտների մասնագիտական հմտությունների ձևավորում՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան: Գործատուների հետ <հետադարձ կապի> զարգացում և ընդլայնում :	Գործատուների հետ հանդիպումների կազմակերպում(շարունակական): Կլոր սեղանների, քննարկումների կազմակերպում ֆակուլտետի տարբեր մասնագիտությունների շրջանավարտների հետ, կրթական ծրագրերի լուսաբանման, թերությունների վերհանման նպատակով:
7.2.	Կլոր սեղան, սեմինար քննարկումներ	Կլոր սեղանների, քննարկումների անցկացում,

	գործատուների մասնակցությամբ:	
7.3.	Շրջանավարտների բանկի ստեղծում:	Շրջանավարտների բանկի առկայություն (շարունակական)

ՆՊԱՏԱԿ 1.ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

2018թվականի ընթացքում վերանայվել են ֆակուլտետի մասնագիտությունների՝ Կենսաբանություն,Դեղագործական քիմիա, Քիմիա, Բնապահպանություն և բնօգտագործում բակալավրիական և Կենսաբանություն, Դեղագործական քիմիա մագիստրոսական կրթական ծրագրերը: Ամբիոնները աշխատում են մասնագիտությունների կրթական ծրագրերի ինքնավերլուծության վրա:

Յուրաքանչյուր տարի ամբիոնների կողմից վերանայվում և թարմացվում են դասախոսական նյութերը, ԱՈՒՄՓ-ները, կազմվում են նոր դասընթացների առարկայական ծրագրերը: Վերանայվել են ուսումնական և արտադրական պրակտիկաների ծրագրերը, որոնք նախապես հաստատվել են ամբիոնների, իսկ հետո ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի նիստերում: Այս դաշտում ամբիոնները դեռևս շատ անելիքներ ունեն, քանի որ ոչ բոլոր դասախոսներն են ընդգրկված ինքնավերլուծության կազմմանը: Ամբիոնների կողմից կատարվել է աշխատաշուկայի պահանջների վերլուծություն և դրա հիման վրա առաջարկվել են փոփոխություններ կրթական ծրագրերում:

Վերջին հինգ տարվա ընթացքում նոր պայմանագրեր են կնքվել տարբեր հաստատություններում ուսանողների ուսումնական և արտադրական պրակտիկաներն անցկացնելու համար: 2018թ Կենսաբանություն մասնագիտության բակալավրի 4-րդ կուրսի արտադրական պրակտիկան անցկացնելու համար պայմանագիր է կնքվել ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի և Մարգահովիտի ATP բարեգործական կազմակերպության հետ:

Ամբիոնները լարված աշխատում են առաջիկա 2019թ բուհի ինստիտուցիոնալ հավատարմագրմանն ընդառաջ:

Ֆակուլտետի խորհրդի նիստերում պարբերաբար լսվել և քննարկվել են կուրսերի խորհրդատուների կատարած աշխատանքների դրվածքը, մատենավարության վիճակը և առաջարկվել են կոնկրետ գործողություններ (շաբաթվա վերջում կուրսերի խորհրդատուների կողմից ուսանողների հաճախելիության հաշվառում, բացակայությունների հիմնական պատճառների առանձնացում, գործնական-լաբորատոր աշխատանքների ամենօրյա գնահատումների նկատմամբ վերահսկողություն, թերությունների բարձրաձայնում և կանխում, և այլն): Խորհրդատուների աշխատանքը վերահսկվում է ֆակուլտետի ավագ խորհրդատուի կողմից, ինչի արդյունքում շատ թերություններ և բացթողումներ արագ են վերացվում: Ցավոք ֆինանսական միջոցների սղության պատճառով, 2018-2019 ուստարվանից հանվել է ֆակուլտետի ավագ խորհրդատուի հաստիքը, իսկ կուրսերի խորհրդատուները աշխատում են հասարակական հիմունքներով:

2018թ. առկա և հեռակա ուսուցման համակարգում ընդունելություն է կազմակերպվել «Կենսաբանության», «Դեղագործական քիմիա» և «Ֆիզիկական

դաստիարակություն և սպորտային մարզումներ» մասնագիտությունների բակալավրի կրթական ծրագրով: Ցավոք պետք է նշեմ, որ դիմորդների թվաքանակի նվազման, գուցե և մեր որոշ թերությունների պատճառով, չի հայտարարվել ընդունելություն «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրով: Հետաքրքիր է այն փաստի արձանագրումը, որ ժամանակակից այդ մասնագիտությունը, որն այնքան պահանջված է շուկայի կողմից, դիմորդի խնդիր է ունենում: Այստեղ պետք է որոնել առաջին հերթին մեր բացթողումները: Հեռակա ուսուցման համակարգում արդեն երկրորդ տարին է չենք ունենում կենսաբանություն մասնագիտությամբ ընդունվողներ: Դա լուրջ խնդիր է, և Կենսաբանության ամբիոնն այստեղ շատ անելիքներ ունի: 2019թ. Ընդունելությանն ընդառաջ ամբիոնի դասախոսները հասարակական հիմունքներով անց են կացնում նախապատրաստական դասընթացներ դիմորդների հետ:

Կենսաբանության մագիստրատուրայում նախորդ տարվա 2 ուսանողի փոխարեն ունենք 6 մագիստրանտներ, իսկ դեղագործական քիմիայում՝ 4 ուսանողներ, նախորդ տարվա 10-ի փոխարեն:

2018թ. հեռակա ուսուցման համակարգ ընդունվել են 20 ուսանողներ, որոնցից 18-ը՝ ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ, իսկ երկուսը՝ դեղագործական քիմիա մասնագիտություններով:

Առաջադիմությունը ֆակուլտետում

2017-2018 ուստարվա 2-րդ կիսամյակում բակալավրիատի առկա ուսուցման համակարգի առաջադիմությունը կազմել է 91,13%, նախորդ 88 տոկոսի տարվա փոխարեն: Հեռակա համակարգում այդ ցուցանիշը եղել է 68.1 %, նախորդ տարվա 85,22 % փոխարեն:

Մագիստրատուրայում առաջադիմությունը կազմել է 100 տոկոս:

2018թ. Շրջանավարտների թիվը կազմել է՝ բակալավրիատի առկա ուսուցման համակարգ՝ 25 ուսանող, իսկ մագիստրատուրայի շրջանավարտների թիվը՝ 11:

Անհատական և ինքնուրույն աշխատանքների կազմակերպման հարցեր

Ամբիոնների դասախոսների կողմից վերանայվել են անհատական և ինքնուրույն աշխատանքների ձևերն ու թեմաները, որոնց մի մասն արդեն ընդգրկված է ԱՌԻՄՓ-ներում, իսկ մյուս մասը քննարկման փուլում է: Ուրախացնող է այն փաստի արձանագրումը, որ որոշակի աշխուժացում է նկատվում հեռակա ուսուցման համակարգի ուսանողների մոտ: Նրանց մեծ մասը ինքնուրույն աշխատանքները հանձնում են շնորհանդեսի ձևով:

Խնդիրներ և անելիքներ առաջիկայում

1. Ապահովել Բնապահպանություն և բնօգտագործում մասնագիտությամբ մագիստրոսական կրթական ծրագրով ուսուցման կազմակերպումը:

2.Մշակել նոր մագիստրոսական կրթական ծրագրեր՝ Ագրոնոմիա, Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ, Կենսաքիմիա մասնագիտությամբ և ձեռք բերել թույլտվություն այդ մասնագիտություններով կրթություն կազմակերպելու համար:

3.Ավելացնել համակրգաչային տեխնիկայով ապահովված կաբինետների քանակը ֆակուլտետում:

4.Քիմիայի և ՖԴ և ԱԻՀ ամբիոններին առաջարկել մշակել շարունակական կրթության մեկ դասընթաց:

5.Ավելացնել դասալսումների քանակը, իսկ արդյունքները քննարկել ամբիոնների նիստերում:

ՆՊԱՏԱԿ 2. Գիտահետազոտական գործունեություն

Ֆակուլտետում դասախոսում են 4 դոկտոր պրոֆեսորներ, որոնցից մեկը՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 16-ը՝ դոցենտներ, 18-ը՝ գիտության թեկնածուներ են: Ռ.Եդոյանը ՀՀ ԳԱԱ Երևանի պետական ագրարային համալսարանի մասնագիտական խորհրդի անդամ է:

2018թ. ընթացքում կենսաբանության ամբիոնի դասախոսները տպագրել են 15գիտական աշխատանքներ, որոնցից 6-ը՝ միջազգային, 2-ը՝ արտաքին հեղինակների հետ, մեկ մենագրություն, մեկ դասագիրք:

Դասագրքի հեղինակն է Ռ.Հ.Եդոյան <Բուսաբանություն>, իսկ մենագրության հեղինակն է Զ.Ս.Վարդանյան <Լոռու մարզի տեխնաձին աղտոտման կենսատերկրաքիմիական գնահատում (Էկոտոքսիկոլոգիա)> վերնագրով:

2017թ. Կենսաբանության ամբիոնի դասախոսների կողմից տպագրվել էր 9գիտական հոդված, որոնցից 2-ը՝ միջազգային ամսագրերում, մեկ ուսումնամեթոդական ձեռնարկ և մեկ դասագիրք:

Քիմիայի ամբիոն – 9 հոդված, նախորդ տարվա 10 հոդվածի փոխարեն:

Ֆ/Դ և ԱԻՀ ամբիոն –5 գիտական աշխատանքներ, որոնցից՝ 1 ուսումնամեթոդական ձեռնարկ, 1մենագրություն, 3հոդված, իսկ նախորդ տարում տպագրվել էր 1 հոդված և մեկ մենագրություն:

Գիտաժողովներ


2018թ. Ընթացքում ֆակուլտետի երկու դասախոսներ՝ կգո, պրոֆեսոր Զ.Ս.Վարդանյանը և քիմիայի ամբիոնի դասախոս կգթ.Վ.Վ.Հովսեփյանը մասնակցել են

Երևանում տեղի ունեցած Մանդի գիտության և տեխնոլոգիաների Սևծովյան ասսոցիացիայի 2-րդ համաժողովին:

Քիմիայի ամբիոնի դասախոս Ա.Ղազարյանը մասնակցել է ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական քիմիայի ինստիտուտում կազմակերպված 5-րդ միջազգային գիտաժողովին:



ա) Զ.Վարդանյան և Վ.հովսեփյան, Մանդի գիտության և տեխնոլոգիաների Սևծովյան ասսոցիացիայի 2-րդ համաժողով, 2018;



բ) Ա.Ղազարյան, ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական քիմիայի ինստիտուտում կազմակերպված 5-րդ միջազգային գիտաժողով, 2018թ.

Նկար 1. ա) Զ.Վարդանյան և Վ.հովսեփյան, Մանդի գիտության և տեխնոլոգիաների Սևծովյան ասսոցիացիայի 2-րդ համաժողով, 2018; բ) Ա.Ղազարյան, ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական քիմիայի ինստիտուտում կազմակերպված 5-րդ միջազգային գիտաժողով, 2018թ.

2018թ. Կենսաբանության ամբիոնի դասախոսներ կզո, պրոֆեսոր Զ.Ս.Վարդանյանը գգթ, դոցենտ Լ.Ե.Բայրամյանը մասնակցել են ԵՊՄՀ Կենսաբանության ամբիոնի կողմից կազմակերպված հանրապետական <Հայաստանի Հանրապետության կենսաբազմազանության և ագրոկենսաբազմազանության հզորությունների գնահատումը և կենսանվտանգության ապահովման գիտակրթական հիմունքների ներդրումը> խորագրով կազմակերպված գիտաժողովին: Նրանք ներկայացրել են <Որոշ ռելիկտային տեսակների պահպանության խնդիրները Լոռու մարզում> թեմայով զեկուցում:



Նկար 2. Կենսաբանության ամբիոնի դասախոսներ Զ.Վարդանյանը և Լ.Բայրամյանը Հնարապետական գիտական կոնֆերանսի ժամանակ

Գիտական աստիճան, կոչում

2018թ. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը համալրվեց մեկ պրոֆեսորով և մեկ դոցենտով: Կենսաբանության ամբիոնի դասախոս Զ.Ս.Վարդանյանին ՀՀ ԲՈՀ-ի կողմից շնորհվեց պրոֆեսորի, իսկ ՖԴ և ԱԻՀ ամբիոնի դասախոս Ա.Բարսեղյանին դոցենտի գիտական կոչում:

Արդիական թեմաների շուրջ սեմինարների կազմակերպում

Սեմինարների կազմակերպման հիմքում որպես ելակետ են դիտարկվում դասախոսների ներառվածությունը ամբիոնների գիտական ուղղությունների ուսումնասիրության մեջ և դասախոսների անձնական ու գիտական հետաքրքրությունների շրջանակը: Այս իմաստով չկա որևէ թեմա կամ սեմինարի նիստ, որ չունենա արդիական հնչեղություն:

2018թ. Ժամանակակից կարգաբանության խնդիրները թեմայով դասախոսություն է կարդացել ֆակուլտետի նախկին շրջանավարտ կգթ Կարինե Հյուսյանը(Նկ.3):



Նկար 3. Կենսաբանաքիմիական ֆակուլտետի ուսանողների համար դասախոսություն է կարդում ֆակուլտետի նախկին շրջանավարտ կ.գ.թ., ֆրանսիահայ Կ.Հյուսյանը, 2018թ.

2018թ. ֆակուլտետի ուսանողներից ՈւԳԸ ընթերցումներին մասնակցել են թվով 13 ուսանողներ: Այս պահին տպագրության մեջ են թվով 5 աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է ուսանողների քանակը, ովքեր ընդգրկված են ՈւԳԸ աշխատանքներում:

2018թ. կենսաբանության ամբիոնի կողմից Կարմիր Խաչի Վանաձորի գրասենյակի հետ համատեղ կազմակերպվեց սեմինար-քննարկում Կլիմայի գլոբալ փոփոխություններ. Մպառնալիքներ և վտանգներ թեմայով: Սեմինարին մասնակցում էին նաև ՏԻՄ ներկայացուցիչներ: Ելույթ ունեցան ֆակուլտետի կենսաբանության մասնագիտության ուսանողները, բարձրացնելով արդիական հնչեղություն ունեցող բնապահպանական խնդիրներ կապված Կլիմայի գլոբալ տաքացման հետ:



Նկար4 . Կլիմայի գլոբալ փոփոխություններ. Մպառնալիքներ և վտանգներ, 2018թ.

Անելիքներ

1.Երկու տարին մեկ հաճախականությամբ կազմակերպել հանրապետական գիտաժողով, ձգտել այն դարձնել ֆակուլտետի համար ավանդական

Նպատակ 3 ՍՈՑԻԱԼ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ

2018թ. ևս ֆակուլտետում կազմակերպվեց 2007թվականից ավանդական է դարձել <Բաց դռների շաբաթ> բազմաբնույթ միջոցառումների կազմակերպումը՝ դոնորական արյան հանձնում,

ուսանողական գիտական ընթերցումներ, բաց դաս տարբեր դպրոցների աշակերտների համար,(Նկ.5)



Նկար5. Դոնորական արյան հանձնում, 12.12.2018թ.



ա

բ

Նկար 6. Ֆակուլտետի Բաց դռների շարաք- միջոցառումների շարքից.ա-Օրգանիզմ և քիմիա, բ-այց <Տարեցների տուն>

Ֆակուլտետում գործում է մեկ ակումբ «Երիտասարդ բնապահպանների ակումբ», որի անդամներն ու կամավորները ֆակուլտետի տարբեր մասնագիտությունների տարբեր կուրսերի ուսանողներ են: Ակումբի աշխատանքները կազմակերպվում են կամավորական սկզբունքներով: Ակումբի անդամները Կենսաբանության ամբիոնի դոցենտ Լ.Բայրամյանի ղեկավարությամբ անց են կացնում բնապահպանական բնույթի միջոցառումներ: Ակումբի ուսանողները ակտիվորեն են մասնակցում նաև ֆակուլտետային, ներբուհական, ներքաղաքային միջոցառումներին:

Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվում են ուսանողների էքսկուրսիաների Հայաստանի պատմական վայրերով: 2018թ. ֆակուլտետի տարբեր մասնագիտությունների թվով 25 ուսանողների հետ անց է կացվել էքսկուրսի Ախթամար վանք, Ծաղկաձորի Կեչառիսի եկեղեցի, Սևան ազգային պարկ և այլն:

Դպրոց-բուհ կապ

Յուրաքանչյուր տարի ֆակուլտետի գիտական խորհրդի և ամբիոնների նիստերում քննարկվել է բուհ-դպրոց կապի ամրապնդման աշխատանքային պլանը: Բուհ-դպրոց կապի շրջանակներում ֆակուլտետը համագործակցում է Վանաձորի թիվ 3-րդ, 10-րդ և 17-րդ, 4-րդ, 11 դպրոցների, ՎՊՀ-ի վարժարանի, Շահումյան գյուղի միջնակարգ դպրոցի, Գյուլագարակի հիմնական դպրոցի հետ: Ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի նիստերում այս հարցը բազմիցս քննարկվել և առաջարկվել է դպրոցների աշակերտներին հրավիրել մեր լաբորատորիաներում փորձեր կատարելու, իսկ դասախոսների կողմից առաջարկ է արվել անցկացնել բաց դասեր աշակերտների նախընտրած թեմաներից: Յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում նվազագույնը 4 անգամ լաբորատորիաներում անց են կացվում գործնական-լաբորատոր աշխատանքներ դասախոսների կողմից դպրոցականների համար: Այդ աշխատանքներին ակտիվորեն են մասնակցել Կենսաբանության ամբիոնի դասախոսներից Ա.Գևորգյանը, Հ.Գրիգորյանը, Ս.Զալինյանը, Գ.Սահակյանը, Լ.Բայրամյանը, Ա.Հարությունյանը, Քիմիայի ամբիոնից՝ Ա.Ղազարյանը(Նկ.10 ա, բ,գ):



Նկար 7. Թիվ 23-րդ դպրոցի աշակերտները գործնական ՎՊՀ-ում գործնական դասից հետո, 2018թ.

Վանաձորի թիվ 3 դպրոցի ուսուցչուհի Ռ.Անտոնյանը Կենսաբանության ամգիստրատորայի ուսանողների հետ լաբորատոր բաց դաս է անցկացրել կենսաբանության մաբիոնի լաբորատորիայում 9-րդ դասարանցիների համար: Կենսաբանության և Քիմիայի ամբիոնների դասախոսները(Գ.Սահակյան, Ա.Հարությունյան, Ա.Գևորգյան, Հ.Գրիգորյան, Ա.Ղազարյան և ուրիշներ) կազմակերպել են բաց դաս-լաբորատոր աշխատանք թիվ 11, 3,6, 23-րդ դպրոցների 9-րդ և 10-րդ դասարանների աշակերտների համար:

Բուհ -քոլեջ կապի շրջանակներում կենսաբանության ամբիոնի դասախոսներ Զ.Վարդանյանը և Գ.Սահակյանը քոլեջի ուսանողների համար դասախոսություն են կարդացել նվիրված մեր տարածաշրջանի բնապահպանական խնդիրներին:

ՆՊՍՏԱԿ 4. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

2015թվականին բուհին նախարարության կողմից տրվեցին Կենսաբանության և Քիմիայի լաբորատորիաներ, որոնց կազմում կային սարքավորումներ ոչ միայն ուսումնական, այլև հետազոտական փորձեր և ուսումնասիրություններ կատարելու համար:

Դասավանդման և ուսուցման որակի բարձրացման նպատակով ֆակուլտետում բացվել են համակարգչային կաբինետներ՝ Քիմիայի ամբիոնի թիվ 53, թիվ 45 որակի կենտրոնի հետ համատեղ: 2018թ. բացվել է Կենսաբանության ամբիոնին կից Կենսաբանա-էկոլոգիական հետազոտությունների լաբորատորիան(Նկ.14):



Նկար 8. Կենսաբանական տեխնոլոգիական հետազոտությունների լաբորատորիայի բացում, 2018թ.

Կապված դասախոսների կողմից դասավանդման ընթացքում, ինչպես նաև ուսանողների ինքնուրույն աշխատանքները շնորհանդեսներով ներկայացնելու պահանջարկի մեծացման հետ, անհրաժեշտություն է զգացվում ունենալու ևս երկու նոր լաբորաններ, որոնք զինված կլինեն համակարգիչով և պրոյեկտորով:

Հաշվի առնելով ուսանողների պահանջները մասնագիտությունների ուսումնական պլաններում կատարվել է փոփոխություն՝ գրեթե հավասարեցված են լաբորատոր-գործնական պարապմունքների և դասախոսության ժամերը: Ուսումնական պլանները վերանայվել, վերամշակվել են և ներկայացվել հաստատման:

Հաշվետու ժամանակահատվածում ավելի է հստակեցվել և կանոնակարգվել լաբորատոր սարքավորումների, նյութերի ձեռքբերման կազմակերպման գործընթացը: Ամբիոնները ժամանակին ներկայացնում են հաջորդ ուսումնական տարվա համար իրենց գնումների պահանջը: Այս դաշտում կան խնդիրներ, որոնք կապվում են գնումների բաժնի հետ: Երբեմն ուշանում է մրցույթի կազմակերպման գործընթացը և զգացվում է որոշ նյութերի պակաս:

2018թ. թիվ 48 կաբինետում և թիվ 57 լաբորատորիայում տեղադրվել է ապակու գրատախտակ, ինչը ավելի ժամանակակից է դարձրել ուսումնական նյութի մատուցումը: Ի դեպ, անավարտ է մնացել թիվ 57 լաբորատորիայի լաբորատոր գույքով կահավորման գործընթացը: Կարծում են առաջիկայում այդ հարցը կլուծվի պատշաճ կերպով: Դեռևս չի լուծված սեփական մարզադահլիճ ունենալու խնդիրը: Անգամ եթե չունենանք Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ մասնագիտությամբ ընդունելություն, նորից այն անհրաժեշտ:

Հաշվետու ժամանակահատվածում վերանորոգվել են մասնաշենքի թիվ 48,49, 67լաբորատորիաները: Շնորհակալություն ղեկավարությանը և ակնկալում ենք մյուս լսարանների վերանորոգումներ առաջիկայում:

Դասախոսական տեքստերի լսում և քննարկում

2018թ. ընթացքում իրականացվել են դասալսումներ ամբիոնների հատկապես երիտասարդ դասախոսների մոտ: Դասախոսական տեքստերը քննարկվում են, շտկվում կամ նորացվում: Ամբիոնների կողմից խիստ ուշադրություն է դարձվում ԱՌԻՄՓ-ներում նորագույն գրականության ընդգրկմանը:

Խնդիրներ և անելիքներ

1. Բարձրացնել լաբորատոր-գործնական պարապմունքների դասավանդման որակը, աշխատելով ավելացնել լաբորատոր-անհատական փորձեր կատարելու հնարավորությունը:

2. Առաջիկայում յուրաքանչյուր ամբիոնի համար աշխատել ձեռք բերել համակարգիչ, պրոյեկտոր:

3. Վերանայել ուսումնական և արտադրական պրակտիկաների ծրագրերը:

4. Հստակեցնել պրակտիկայի անցկացման վայրերը:

ՆՊԱՏԱԿ 5. Արտաքին կապեր և միջազգայնացում

Ֆակուլտետը համագործակցում է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի հետ, ներկայացվել է միջազգային դրամաշնորհային մեկ ծրագրի մրցույթի հայտի (Մննդի անվտանգություն), բայց ցավոք չենք շահել: Հուսանք առաջիկայում կարող ենք հասնել հաջողության այդ բնագավառում:

Օրերս ֆակուլտետի հյուրն էր Վոլգոգրադի պետական համալսարանի դասախոս Դմիտրի Աստախովը, որը կենսաբանության ֆակուլտետի ուսանողների համար դասախոսություն կարդաց <Գիշատիչ ճանճեր> թեմայով:



Նկար 9. Կենսաբանաքիմիական ֆակուլտետի ուսանողների համար դասախոսություն է կարդում Դ.Աստախովը, 2018

Կա նախագիծ այդ համալսարանի հետ դասախոսների և ուսանողների շարժունություն կազմակերպելու, ուսանողներին՝ մագիստրանտներին կրկնակի դիպլոմ տալու բնագավառում: Կարծում եմ համագործակցությունը առաջիկայում կտա իր առաջին պտուղները: Բանակցություններ են տարվում Սանկտ-Պետերբուրգի Վավիլովի անվան պետական համալսարանի հետ մագիստրական կրթության կազմակերպման ուղղությամբ:

ՆՊԱՏԱԿ 6. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Ֆակուլտետի ներկայացուցիչները (կ.գ.դ., պրոֆեսոր Զ.Ս.Վարդանյան, գ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱ թղթակից անդամ Ռ.Հ.Եդոյան, ք.գ.դ., պրոֆեսոր Հ.Ա.Ղազարյան, ք.գ.թ., դոցենտ Ա.Հ.Ղազարյան, դոցենտ Զ.Խ.Էվոյան, ուսանողներ՝ Բ.Կիրակոսյան, Ն.Մելիքյան, Ս.Մարկոսյան, Ա.Հովսեփյան, Ֆ.Ներսիսյան, Գ.Ավետիսյան, Լ.Գալոյան) մասնակցում են ՎՊՀ կառավարման համակարգի (Խորհուրդ, գիտխորհուրդ, ռեկտորատ, ֆակուլտետի գիտամեթոդական խորհուրդ, ՈԻԽ, համալսարանի մանդատային հանձնաժողով) աշխատանքներին: Ուսանողներն ընդգրկված են Կրթական ծրագրերի կազմման աշխատանքային խմբի կազմում, ֆակուլտետի Որակի հանձնաժողովի կազմում:

ՆՊԱՏԱԿ 7. ԿԱՐԻԵՐԱՅԻ և ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Գործատուների հետ հանդիպումների կազմակերպում(շարունակական): Կլոր սեղանների, քննարկումների կազմակերպում ֆակուլտետի տարբեր մասնագիտությունների շրջանավարտների հետ, կրթական ծրագրերի լուսաբանման,

թերությունների վերհանման նպատակով: Կլոր սեղանների, քննարկումների անցկացում:

2. 2018 թ. կատարված աշխատանքներն ըստ սահմանված նպատակների և խնդիրների¹:

(ցույց են տրվում.

- կատարված աշխատանքներն ըստ պլանավորման՝ կարևորելով աշխատանքի արդյունքը, ցուցանիշները, որակական և քանակական ձեռքբերումները
- չպլանավորած, բայց կատարած աշխատանքները:)

3. 2018թ. համար պլանավորված աշխատանքները:

- Ամբիոնների կողմից գիտական ընթերցումների կազմակերպում, անվանի գիտնականների հետ դասախոսությունների կազմակերպում ժամանակակից գիտական հետազոտությունների մասին:
- Քիմիայի ամբիոնի թիվ 57-Անալիտիկ քիմիայի լաբորատորիայի վերանորոգում, Չպլանավորված և կատարված
- Կենսաբանության ամբիոնի թիվ 49, 67 և 62 լաբորատորիաների վերանորոգում
 - SWOT վերլուծություն ստորաբաժանման աշխատանքների վերաբերյալ:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Ֆակուլտետում առկա է համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմ	1.Որոշ դասախոսների մեծ տարիք 2.Օտար լեզվի չիմացություն 3.Դիմորդների քիչ քանակ
2. Առկա են լաբորատորիաներ ուսումնական գործընթացի և հետազոտությունների կատարման համար	4.Հետազոտության բնագավառում միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի բացակայություն
3.Ներդրված են համալսարանական կրթությամբ արդիական մասնագիտություններ	
4.Ֆակուլտետի մասնագիտությունների կրթական ծրագրերը միտված են կրթական վերջնարդյունքներին	
5.Մշակված են համապատասխան ուսումնամեթոդական նյութեր	

¹ Հաշվետվության մեջ անդրադառնալ 3 տարվա համեմատական վերլուծությանը

<p>դասընթացների անցկացման համար</p>	
<p>Հնարավորություններ</p> <p>1. Լեզուների կենտրոնի կողմից դասընթացների կազմակերպում</p> <p>2. Երիտասարդ դասախոսների ներգրավում ժամավճարային կարգով</p> <p>3. Բուհ-դպրոց կապի ամրապնդում</p> <p>4. Դպրոցների աշակերտների մասնակցությամբ բաց դասերի կազմակերպում ֆակուլտետի դասախոսների կողմից</p> <p>5. Գործատուների ներգրավում կրթական ծրագրերի կազմման գործընթացին</p> <p>6. Համագործակցություն տարածաշրջանային կառույցների և գործատուների հետ աշխատաշուկայի նոր մարտահրավերները հաղթահարելու նպատակով:</p>	<p>Սպառնալիքներ</p> <p>1. Առաջիկայում որոշ մասնագետների պակաս</p> <p>2. Միջազգային շարժունության բացակայություն</p> <p>3. Դրամաշնորհային գրանտների մասնակցության բացակայություն</p> <p>4. Գործատուների անտարբերություն կրթական ծրագրերի մշակման և ներդրման հարցում</p>
<p>Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիներ</p> <p>Դասանդման նորագույն տեխնոլոգիաների ներդրման ակտիվացում, երիտասարդ դասախոսների ներգրավում ֆակուլտետի կրթական գործունեության կազմակերպման բնագավառում, դասախոսների լեզուների իմացության բարձրացման նպատակով օտար լեզուների դասավանդման անվճար դասընթացների կազմակերպում, ուսանողների մոտիվացիայի մեծացում օտար լեզուների ուսուցման սիրման համար:</p> <p>Բնագիտական ուղղվածությամբ ծրագրերի խրախուսում ներբուհական և պետական մակարդակներով: Բնագիտական մասնագիտությունների ընդունելության համար պետպատվեր և նպատակային տեղերի քանակի ավելացում:</p>	

5. ԶԱՐԳԱՑՄԱՆ միտումները, 2019 թ. ստորաբաժանման կողմից իրականացվելիք աշխատանքների ցանկը (անդրադառնալով ինչու՞, ինչպե՞ս, մարդկային ի՞նչ ռեսուրսներով, ի՞նչ միջոցներով, ու՞մ պատասխանատվությամբ, ին՞չ վերջնական արդյունքով հարցերին):

Օր.

Նպատակ	Խնդիր	Պատասխանատու /կատարող/	Համագործակցություն	Կատարման ժամկետը	Ակնկալվող արդյունքը /ցուցիչ/	Սպառնալիքներ, ռիսկեր
<i>Ընդհանուր ձևակերպումը</i>	<i>Քայլերը</i>	<i>Ստորաբաժանման ներկայացուցիչ</i>	<i>Կարող են լինել բուհի այլ ստորաբաժանումներ, կամ չհամագործակցել</i>	<i>Անվա կամ կիսամյակի նշագրմամբ</i>	<i>թվեր, փաստաթղթեր, արձանագրություններ, միջառցառումներ.....</i>	<i>Եթե կան /ցանկալի է նշվի/</i>
Օր.						
1.ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ						
1. Նոր մագիստրոսական ՄԿԾ ներդրման նախապատրաստում	1.1.Սոցիալական պատվերի և աշխատաշուկայի հետազոտություն	ՖԴ և ԱԻՀ ամբիոն, ֆակուլտետի ուսումնամեթոդակա խորհուրդ	Ուսումնական մաս, պրակտիկայի բաժին, համալսարանի այլ ամբիոններ	Մարտ-ապրիլ	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ մագիստրոսական ծրագրի առկայություն, հաստատված ուսումնական պլանի առկայություն	Դիմորդների հնարավոր քանակի ապահովում
	1.2. Նոր Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ՝ մագիստրոսական ՄԿԾ ներդրման նախապատրաստում	ՖԴ և ԱԻՀ ամբիոն, ֆակուլտետի ուսումնամեթոդակա խորհուրդ	Ուսումնական մաս, պրակտիկայի բաժին, համալսարանի այլ ամբիոններ	Փետրվար-մարտ	Նիստերի արձանագրությունների առկայություն	
1.3.Ծրագրի ազդեցության ուսումնասիրությունը այլ ծրագրերի վրա /ներքին մրցակցություն/	ՖԴ և ԱԻՀ ամբիոն, ֆակուլտետի ուսումնամեթոդակա խորհուրդ	Ուսումնական մաս, պրակտիկայի բաժին, համալսարանի այլ ամբիոններ	Հունվար-հունիս	Վերանայված կրթական ծրագրերի առկայություն		
2.Մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայում	2.1. առարկայական ծրագրերի և դրանց կրթական ելքային արդյունքների վերանայում՝ մասնագիտության կրթական ծրագրին համապատասխան	Կենսաբանության, քիմիայի, ՖԴ և ԱԻՀ ամբիոններ	Ուսումնական մաս, համալսարանի այլ ամբիոններ	Հունվար-հունիս	Վերանայված տեղեկագրերի առկայություն, ամբիոնների և	
	2.2. Դասընթացների պահանջների, ելքային արդյունքների	Կենսաբանության, քիմիայի, ՖԴ և ԱԻՀ ամբիոններ	Ուսումնական մաս, համալսարանի այլ ամբիոններ	Հունվար-հունիս	Վերանայված տեղեկագրերի առկայություն, ամբիոնների և	

	վերանայում համապատասխանեցում ԿԾ-ով նախատեսվող վերջանարդյունքների:				Ֆակուլտետային խորհրդի նիստերի արձանագրությունների առկայություն	
3.Մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացում.	<p>3.1. Կենսաբանության դասավանդման նոր տեխնոլոգիաներ դասընթացի կազմակերպում շարունակական կրթության շրջանակներում</p> <p>3.2. Ուսանողների անհատական-ինքնուրույն աշխատանքների տեսակների հստակեցում, պահանջների վերանայում</p> <p>3.3. Ուսանողների գնահատման բազմագործոնային համակարգի կիրառման հետ կապված խնդիրների քննարկում, մատյանում գնատականների թափանցիկության</p>	<p>Կենսաբանության ամբիոն</p> <p>Ամբիոններ</p> <p>Ամբիոններ, ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհուրդ</p>	Ուսումնամեթոդական վարչություն,	Տարվա ընթացքում	<p>Ամբիոնների և ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի արձանագրությունների առկայություն</p> <p>Ինքնուրույն աշխատանքի տեսակների հստակ ցուցակ ամբիոններում</p>	

	ապահովում					
	4. շարունակական կրթության համակարգի ստեղծում: 5. Ասպիրանտական կրթության ապահովում 6. Լրացական դասընթացի ներդրում	Կենսաբանության, Քիմիայի ամբիոններ	Ուսումնամեթոդական վարչություն,	2019թ. Մեպտեմբեր-հոկտեմբեր 2019թ. Փետրվար-մարտ	Ասպիրանտական կրթական ծրագրի առկայություն, ամբիոնների նիստերի արձանագրությունների առկայություն	Դիմորդների քիչ քանակ, աշխատատեղերի բացակայություն
Գիտահետազոտական գործունեություն						
<i>Գիտահետազոտական գործունեության ակտիվացում</i>	1. Մասնագիտական թեմաներով ներֆակուլտետային, միջֆակուլտետային հանդիպում-քննարկումների կազմակերպում/ գիտագործնական սեմինարներ, գիտական զեկուցումներ և այլն/	Կենսաբանության, Քիմիայի, ՖԴ և ԱԻՀ ամբիոններ	Ուսումնամեթոդական վարչություն, համալսարանի այլ ամբիոններ	2019 Նոյեմբեր, մարտ	Համապատասխան փաստաթղթերի առկայություն	
	2. միջազգային համագործակցության ծրագրերին/ հետազոտական դրամաշնորհներ, դրամաշնորհային ծրագրեր, միջբուհական և միջազգային գիտաժողովներ/ մասնակցություն 3. Մագիստրոսական	Կենսաբանության, Քիմիայի, ՖԴ և ԱԻՀ ամբիոններ	Ուսումնամեթոդական վարչություն, համալսարանի այլ ամբիոններ	2019 Նոյեմբեր, մարտ	Տպագրված գիտական նյութերի, հրատարակված հոդվածների առկայություն	Ֆինանսական միջոցների պատճառով միջազգային պարբերականներում տպագրելու դժվարություն

	թեզերի թեմաների համապատասխանեցում ամբիոնների գիտահետազոտական ուղղություններին, ուժեղացնել հետազոտական բաղադրիչը ավարտական շխատանքներում 3.1.մագիստրանտների կողմից մեկ կամ երկու տպագրված աշխատանքների ապահովում			2019թ.հունվար-փետրվար 2019թ.հունվար-փոտրվար	Մագիստրոսական թեմաների հաստատում, ֆիքսում ամբիոնների և ուսումնամեթոդական խորհրդի արձանագրություններում Տպագրված հոդվածի առկայություն	
Սոցիալ-դաստիարակչական						
Ուսանողների շրջանում սոցիալ-դաստիարակչական գործունեության կազմակերպում	1.Ուսանողների հասարակական-քաղաքական ակտիվության, քաղաքական և իրավական մշակույթի, քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացների ապահովում:	Դեկանատ, ֆակուլտետի ուսանողական խորհուրդ:	համալսարանի ուսանողական խորհուրդ, համալսարանի մարզառագմահայրենասիրական կենտրոն, համալսարանի մշակույթի կենտրոն	2019 Նոյեմբեր, դեկտեմբեր, հունիս	Բաց դռների շաբաթ -ՈՒԳԸ ընթերցումներ, -դպրոցականների առարկայական օլիմպիադա Կենսաբանություն և քիմիա առարկաներից, Վիկտորինա, Արյան հանձնում	Միջոցառումների կազմակերպում
	2.Ուսանողների դաստիարակություն հայրենասիրության, աշխատասիրության, մարդասիրության, քաղաքացիության և ինտերնացիոնալիզմի	Դեկանատ, ֆակուլտետի ուսանողական խորհուրդ:	համալսարանի ուսանողական խորհուրդ, համալսարանի մարզառագմահայրենասիրական կենտրոն, համալսարանի	Տարվա ընթացքում	Բնապահպանական միջոցառումների կազմակերպում քաղաքի տարածքում, Այց խնամքի կենտրոն և Օրրան ՀԿ,	

	և հանդուրժողականության ոգով:		մշակույթի կենտրոն		Բարին արա շարքի միջոցառումների անցկացում, մարզական միջոցառումների անցկացում: Միջոցառումների հրավիրատոմսերի առկայություն	
	3.Ուսանողների ֆիզիկական, ռազմահայրեասիրական, հոգևոր մշակությային, գեղագիտական, առողջապահական դաստիարակության գործունեության ապահովում:	Դեկանատ, ֆակուլտետի ուսանողական խորհուրդ:	համալսարանի ուսանողական խորհուրդ, համալսարանի մարզառազմահայրենասիրական կենտրոն, համալսարանի մշակույթի կենտրոն	Տարվա ընթացքում	Միջոցառումների հրավիրատոմսերի առկայություն	
	4.Ուսանողների անձի դաստիարակվածության, կրթվածության, արհեստավարժության և կարևորության բարձրացում և կատարելագործման գործընթացների կազմակերպում, նրանց աշխատասիրության, կրթվածության, մասնագիտական որակների շարունակական բարձրացում, համամարդկային	Դեկանատ, ֆակուլտետի ուսանողական խորհուրդ:	համալսարանի ուսանողական խորհուրդ, համալսարանի մարզառազմահայրենասիրական կենտրոն, համալսարանի մշակույթի կենտրոն	Տարվա ընթացքում	Միջոցառումների հրավիրատոմսերի առկայություն	

	արժեքներին հաստատում և դաստախարկություն:					
Որակի ապահովում						
<i>Դասավանդման գործընթացի կատարելագործում</i>	1. Ժամանակակից մասնագիտացված գիտաուսումնական լաբորատորիաների ստեղծում 2. Ժամանակակից ուսումնական, գիտական և ծրագրային ապահովման նյութերի ձեռքբերում	Կենսաբանության, Քիմիայի, ՖԴ և ԱԻ հիմնահարցերի ամբիոններ, Ուսումնամեթոդական վարչություն, համալսարանի այլ ամբիոններ	Ուսումնամեթոդական խորհուրդ, համալսարանի այլ ամբիոններ	2019թ. ընթացքում	Թարմացված գիտաուսումնական լաբորատորիաների առկայություն, լաբորատոր-գործնական աշխատանքների անցկացում լաբորատորիաներում	
	3. ուսումնական պրոցեսում ժամանակակից կրթական տեխնոլոգիաների ակտիվ ներդրում: Դասավանդման ժամանակակից տեղեկատվական և կոմունիկացիոն տեխնոլոգիաների զարգացում	Քիմիայի, ՖԴ և ԱԻ հիմնահարցերի ամբիոններ, Ուսումնամեթոդական վարչություն, համալսարանի այլ ամբիոններ	Ուսումնամեթոդական խորհուրդ, համալսարանի այլ ամբիոններ	2019թ. ընթացքում	Դասապրոցեսի կազմակերպում դասավանդման նոր տեխնոլոգիաներով	
	4. ակտիվ և ինտերակտիվ ուսուցման ձևերի օգտագործում 5. գործնական հմտությունների	Քիմիայի, ՖԴ և ԱԻ հիմնահարցերի ամբիոններ, Ուսումնամեթոդական վարչություն, համալսարանի այլ	Ուսումնամեթոդական խորհուրդ, համալսարանի այլ ամբիոններ		Ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի արձանագրությունների գրառումներ, Ամբիոնների	

	զարգացման նպատակով ուսանողների՝ փոքր խմբերով ուսուցման գործնական ծրագրի մշակում և իրականացում, լաբորատոր աշխատանքների կատարում:	ամբիոններ			արձանագրությունների գրառումներ,	
	6.Ուսումնաարտադրական պրակտիկայի բազայի ընդլայնում և պրակտիկական կազմակերպող կազմակերպությունների հետ համատեղ պրակտիկայի ուսումնամեթոդական բազայի վերանայում: 7.Ուսումնական պրոցեսում հեռահար ուսուցման մշակում և ներդրում: 8.Օտար լեզուների ուսուցման խորացում, լեզվական խոչընդոտի վերացում:	Կենսաբանության, Քիմիայի, ՖԴ և ԱԻ հիմնահարցերի ամբիոններ,	Ուսումնամեթոդական խորհուրդ, համալսարանի այլ ամբիոններ, Շարունակական կրթության կենտրոն: Օտար և ռուսաց լեզուների ամբիոններ:	2019թ. ընթացքում	Ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի արձանագրությունների գրառումներ, Ամբիոնների արձանագրությունների գրառումներ, Հեռահար ուսուցման դասընթացի պլանի առկայություն	
Արտաքին կապեր և միջազգայնացում						
<i>Դասախոսների միջազգային</i>	1.միջազգային գիտական	Կենսաբանության, Քիմիայի, ՖԴ և ԱԻ				Դասախոսների և ուսանողների կողմից

<p>համագործակցության բնագավառում գործունեության ակտիվացում: Ուսանողների միջազգային համագործակցության բնագավառում գործունեության ակտիվացում</p>	<p>համագործակցության ծրագրերին/ հետազոտական դրամաշնորհներ, դրամաշնորհային ծրագրեր, միջբուհական և միջազգային գիտաժողովներ/ մասնակցություն</p>	<p>հիմնահարցերի ամբիոններ,</p>				<p>օտար լեզվով հաղորդակցվելու և մասնագիտական գիտելիքները արտահայտելու դժվարություններ</p>
	<p>2. Հանրապետական բուհերի հետ համատեղ դրամաշնորհային ծրագրերի կատարում:</p>	<p>Կենսաբանության, Քիմիայի, ՖԴ և ԱԻ հիմնահարցերի ամբիոններ,</p>	<p>Համալսարանի ՈԻԳԸ, ֆակուլտետային ՈԳԸ</p>	<p>Տարվա ընթացքում</p>	<p>Տպագրված աշխատանքների առկայություն</p>	
	<p>3. Միջբուհական, հանրապետական ուսանողական ընթերցումներին մասնակցության ապահովում:</p>	<p>Կենսաբանության, Քիմիայի, ՖԴ և ԱԻ հիմնահարցերի ամբիոններ,</p>	<p>Համալսարանի ՈԻԳԸ, ֆակուլտետային ՈԻԳԸ</p>	<p>Տարվա ընթացքում</p>	<p>Տպագրված աշխատանքների առկայություն</p>	
<p>Կառավարման համակարգի կատարելագործում</p>						
<p>Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ընտրություն մրցակցային հիմունքներով՝ նախապատվություն տալով գիտական աստիճաններ, կոչումներ և մասնագիտական, գիտամեթոդական</p>	<p>1. Դասախոսների մասնակցություն համալսարանի և ֆակուլտետի ուսումնական գործունեության կառավարմանը 2. ուսանողների մասնակցություն համալսարանի և ֆակուլտետի ուսումնական</p>	<p>Ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհուրդ</p>	<p>Դեկանատ, ուսումնամեթոդական վարչություն</p>	<p>Տարվա ընթացքում</p>	<p>Ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի հաստատված կազմ: Բուհի կառավարման խորհրդում, ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդում ուսանողների</p>	

<p>բարձր որակավորում ունեցող դասախոսներին: Դասախոսների և ուսանողների համալսարանի և ֆակուլտետի կառավարման գործընթացների մասնակցության ծավալների մեծացում:</p>	<p>գործունեության կառավարմանը</p>				<p>մասնակցության առկայություն</p>	
<p>Կարիերայի և շրջանավարտների աջակցություն</p>						
<p><i>Կարիերայի և շրջանավարտներին աջակցություն</i></p>	<p>1.Ֆակուլտետի շրջանավարտների մասնագիտական հմտությունների ձևավորում՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան: Գործատուների հետ < հետադարձ կապի> զարգացում և ընդլայնում :</p>	<p>Ֆակուլտետի ուսումնամեթոդական: Կենսաբանության, Քիմիայի, ՖԴ և ԱԻ հիմնահարցերի ամբիոններ,</p>	<p>Կարիերայի կենտրոն</p>	<p>Տարվա ընթացքում</p>	<p>Համապատասխան փաստաթղթերի և արձանագրությունների, մասնակցության հայտերի առկայություն</p>	<p>Գործատուների անտարբերությունը բուհում կատարվող գործընթացների նկատմամբ</p>
<p>2.Կլոր սեղան, սեմինար քննարկումներ գործատուների մասնակցությամբ:</p>	<p>Ֆակուլտետի ուսումնամեթոդական: Կենսաբանության, Քիմիայի, ՖԴ և ԱԻ հիմնահարցերի ամբիոններ,</p>	<p>Կարիերայի կենտրոն</p>	<p>Տարվա ընթացքում</p>	<p>Համապատասխան փաստաթղթերի և արձանագրությունների, մասնակցության հայտերի առկայություն</p>		
<p>3.Շրջանավարտների բանկի ստեղծում:</p>	<p>Ֆակուլտետի ուսումնամեթոդական: Կենսաբանության,</p>	<p>Կարիերայի կենտրոն</p>	<p>Տարվա ընթացքում</p>	<p>Համապատասխան փաստաթղթերի և արձանագրություն</p>		

		Քիմիայի, ՖԴ և ԱԻ հիմնահարցերի ամբիոններ,			ների, մասնկացության հայտերի առկայություն	
	4. Կրթական ծրագրերի կազմմանը շրջանավարտների մասնակցություն:	Ֆակուլտետի ուսուցման մեթոդական: Կենսաբանության, Քիմիայի, ՖԴ և ԱԻ հիմնահարցերի ամբիոններ,	Կարիերայի կենտրոն	Տարվա ընթացքում	Համապատասխան փաստաթղթերի և արձանագրությունների, մասնկացության հայտերի առկայություն	

ԿԵՆՍԱԲԱՆԱՔԻՄԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ՝

Ջ.Ս.ՎԱՐԴԱՆՅԱՆ

25.12.2018թ.